

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻՒԱԿԱՆԻՆ

20-րդ ՏԱՐԻ

20-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոպագանդով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԿԻՆՆԵՐԻ:
(ՄՇԱԿԻ) տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել է ՄՇԱԿԻՆՆԵՐԻ կարելի է խմբագրատան և Քաղաքային փողոցների մակերեսում, Թամարյանի տանը):

Կայսերական ռուս թագաւորից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտատպանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

Յայտարարութիւններ ընդունւում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով. բառերն զմարդում է 2 կոպեկ:

(Մշակի) առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրւում, այլ տպագրւում են միմիայն լրագրողների յայտարարութիւնները, մասնագիտական և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնապէս է վճարւում: Մասնագիտական տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄԻՏԵ

Ջրօրհնէքի օրը ժամանակաւոր կամուրջի խորտակումը խորին ցաւով պէտք է անել՝ չանցաւ առանց մարդկային զոհերի: Մի քանի ընտանիքների կորցրին իրանց տան զուլններ, իրանց կերակրողներ:

Ճանաչելով աղքատականութեան զգայուն դաշմունքները դէպի ամեն տեսակ բարեգործութիւն, եւ իմ պարտաւորութիւնս եմ համարել բաց անել զբամական հանգանակութիւնը քաղաքային վարչութեան մէջ յօգուտ կործանականների ընտանիքներին:

Նուիրատուութիւններն ընդունւում են քաղաքային վարչութեան դիւանատանը ամեն օր մինչև ցերեկվայ 2 ժամը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բացատրենք մեր արածը.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոնը. Կովկասեան դիմաւորական նախաձեռնանքը դատարանի նիստը. Համակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՍԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համակ Գերմանական. Արտաքին լուրեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԿԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՏԵՂԵԿԱՅՈՅՑ.—ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՅԱՏՐԵՆՔ ՄԵՐ ԱՐՍԱՔԻՆ

Շատերի համար տարօրինակ երևաց, որ «Մշակ» խմբագիրը ինչն իրան թեմական պատգամաւորի թեկնածու է առաջարկում: Այդ տեսակ քայլ նախ տարօրինակ է թեմական օրովհետեւ նոր, անսովոր բան է, իսկ երկրորդ՝ անօրհնեալ, անհաճելի է այն մարդկանց համար, որոնք այդ տեսակ դիւրամաճներում սովոր են գործել ոչ թէ բացարձակ կերպով, այլ ծածուկ, գողնալով ճանապարհահանգից, որովհետեւ ինքնուրուի և խնամուածութիւններով...

Մի օր և է հասարակական պաշտօն ձեռք բերելու համար, որի հետ կապված է աւելի կամ պակաս խոշոր ռոճիկ, մեր ինտելիգենցիային պատկանողները վաղուց արդէն սովոր են դիմել ռուսացողների տնից տուն ման գալ խնդրելով, աղաչելով, որ այս կամ այն հաստատութեան մէջ եղած պաշտօնը իրանց տան... Մեղանում ամօթ է համարվում խնամութիւնների միջոցով, առանց նոյն իսկ շնորհ ունենալու այս կամ այն պաշտօն վարելու, ձեռք բերել քաղաքային վարչութեան կամ բանկերի մէջ նոյն իսկ ամենանշանաւոր պաշտօններ: Մարդիկ, որոնք ոչինչով չեն ապացուցել իրանց ընդունակութիւնը այս կամ այն պաշտօն վարելու, լոկ պրօտէկցիայի, խնամութեան միջոցով ձեռք են բերում մեր հասարակութեան մէջ ամենանշանաւոր պաշտօններ: Եւ դա ամօթ բան, կամ տարօրինակ երևոյթ է համարվում:

Իսկ երբ մի մարդ պարզ յայտնում է որ առաջարկում է կատարելի կաթողիկոսական

ընտրութիւնների համար թեմական պատգամաւորի իր թեկնածութիւնը, —բոլոր այն մարդիկ, որոնք առաւօտեց մինչև երեկոյ չաղ պաշտօնների տեսից են ընկած, հազար ու մի պաշտօններ են ձեռք գցում, որպէս զի աւելի ռոճիկ ստանան, և ստացած փողերը վատնեն քէֆերի և անկարգ կենսութեան վրա, այդ նոյն մարդիկ կեղծաւոր կերպով իրանց զայլակոված են ցոյց տալիս, որ մէկը համարձակվել է բացարձակապէս, տպագրական խօսքի միջոցով իրան թեկնածու առաջարկել և այն էլ այնպիսի պաշտօնի համար, որտեղ փողի նշոյն անգամ չը կայ, այլ օրի հետ կապված է համոզմունք, սկզբունք, հասարակաց գաղափար, կուսակցական դաւանանք...

Վերջապէս ո՞վ է ձեռք արգելում նոյնն անել, եթէ ունեք ուղղութիւն, համոզմունք, հաստատ սկզբունքներ: Բայց բանը դրանում է, որ ինքներդ այդ բոլորից զուրկ լինելով, թուլութեան կատարութիւնից, փրփուրը բերանին ջննում էք հասարակաց կարծիքի աչքում վայր ձգել այն մարդկանց, որոնք յանդիման են բացարձակապէս գործել հասարակաց ամեն անպարկէշներում և ոչ թէ առաջ են դնում խնամութիւններ, ստոր ինտրիգաներ, շողոք-քորթութիւններ և քսու ձեւերի միջոցով:

Մենք համարձակվել ենք առաջարկել մեր թեկնածութիւնն այն պատճառով, որ հաստատ համոզմունքներ ունենք և ամեն օր շապիկի պէս չենք փոխել մեր համոզմունքները 19 տարվայ ընթացքում: Մենք առաջարկել ենք մեր թեկնածութիւնը, որովհետեւ ամենքին յայտնի են մեր համոզմունքները, մեր ուղղութիւնը և «Մշակ» 19 տարվայ ընթացքում մեր դաւանած սկզբունքները մեր եկեղեցու վերաբերմամբ: Այո, ամենքին յայտնի են մեր հայեացքները, սակայն ոմանք չեն համակրում մեր ուղղութեանը նախ, որովհետեւ խաւարած միտ բանակին են պատկանում, երկրորդ՝ որովհետեւ պղտոր ջրում ձուկ որսողների համար երբեք ձեռնառու չեն պարզ, առաջադէմ գաղափարները: Եւ, ի հարկէ, մենք

մեր առաջարկութեամբ այդպիսիներին չենք դիմում, այլ դիմում ենք նրանց, որոնք միշտ համակրել և համակրում են մեր ուղղութեանը, մեր դաւանած սկզբունքներին: Նրանք, որոնք ծանօթ են մեր երկարամեայ գրական գործունէութեան ուղղութեան հետ, որոնք համակրում են այն հայեացքներին, որ մենք անդադար յայտնել ենք մեր եկեղեցու վերաբերմամբ, նրանք որոնք հասկացել են թէ մենք ենք եկեղեցու բարեկամներ, ցանկանալով նրան ժամանակի պահանջման համաձայն բարեփոխութիւն, թող այսպիսիները մեզ քուէ տան, համոզված լինելով, որ պատգամաւոր ընտրված լինելով մենք մեր կողմից բուէ կը տանք այնպիսի կաթողիկոսին, որը կը կատարեալ իրաւորմը մեր վայելեցած պրօպագանդ, կը կարողանայ եկեղեցին բարեփոխել ժամանակի պահանջներին համաձայն, կը կարողանայ վերացնել եկեղեցականներէրը կաշառակերութիւն, անարժան վարմունքներ, կը կարողանայ բարձրացնել հոգեւորականների բարոյական և մտաւոր մակերակարգը, բարեփոխել նրանց նիւթական գրութիւնը, կը կարողանայ վերացնել մեր եկեղեցական վարչական կազմակերպութիւնից այն մի քանի հնացած օրէնքները, որոնք այս րօպէիս արգելք են լինում հայերին երջանիկ և անդորր կենսւր վայելելու:

Այո, մենք այնպիսի մարդկանց ենք դիմում, առաջարկելով որ մեզ քուէ տան, որոնք մեզ հասկանում ու մեզ համակրում են, որոնք դիտեն թէ մի հաստատութեան համար ժամանակի պահանջման համաձայն վերանորոգութիւն և անընդհատ առաջադիմութիւն ցանկանալ, նշանակում է այդ հաստատութեան անկէղծ բարեկամ լինել և ի հարկէ մեր մտքում էլ երբեք չէր անցնի մեր առաջարկութեամբ դիմել այն խաւարածներին, որոնք տարիների ընթացքում, ամեն ջանք են թափում պահել եկեղեցու բարոյական, մտաւոր և նիւթական շէնքը մշտապէս քայքայված գրութեան մէջ, որպէս զի իրանք շահվեն, իրանք աւելի հեշտ կերպով օգտվեն հաստատութեան մշակական խաւնաշփոթ գրութիւնից, և այդ միշտ շարունակվող ընդհանուր աւարառութեան ժամանակ իրանք էլ իրանց բաժինն ունենան, իրանք էլ կողողալով մի մասն անուշ անին, իրանք էլ աննկատելի կերպով օգտվեն ազգային եկեղեցական դրամներէրը:

Մի օր և է հաստատութեան մշտապէս խաւնաշփոթ, անկարգ, քայքայվող գրութիւնը միշտ ձեռնառու է պղտոր ջրում ձուկ որսողների համար: Եւ այդ տեսակները իրանց ստոր ձգտումները ծածկելու համար միշտ խօսում են սուրբ աւանդութիւնների անունից, հնազարեան սըրբութեան անունից:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Օտեկ», — և այդ դերում առաջին անգամ պ. Պետրոսեան.— ահա այն հետաքրքրական կէտը, որ գրաւել էր թատրոն մեծ բազմութիւն, յուն վարի 9-ին: Հասարակութիւնը տրամադրված էր կարծելու, որ բէնէֆիցիանտ պ. Պետրոսեան չի տապալի այդ հուշակաւոր դերը, — և չը սխալվեց: Ընդհանրապէս ասելով՝ մեր շնորհալի դերասանը, բարեկից ուսումնասիրութեան և տոկուն աշխատանքի շնորհով, կարողացաւ այնպէս խաղալ, որ հասարակութիւնը գոհ մնաց:

Մենք մի ուրիշ անգամ «Բաղադրացիական մահի» և «Ուրիշ Ափսոսար» առիթով ասել ենք, և կրկնում ենք այժմ էլ.— Պետրոսեանի նման զե-

րասանները չեն ստեղծագործում, այլ ընդօրինակում են. նրանք ոչ մի դերին այն դոյնը և այն ոյժը չեն կարող տալ, ինչ որ տալիս է մի Ալաման, կամ մի Բոսսի: Գրա համար հարկաւոր է ստեղծագործել, իսկ Պետրոսեանի նման դերասանները միայն ընդօրինակողներ են: Լաւ ընդօրինակել,— ահա դրանց գործը. և նա իրանց այդ գործը կատարեն բարեխղճութեամբ և շնորքով.— արժանի են կատարեալ ընդօրինակութեան: Նոյն շնորհակալութեան է արժանի և պ. Պետրոսեան «Օտեկ» դերի կատարման տեսակէտից: Բէնէֆիցիանտը երկրորդ գործողութեան մէջ և երրորդ գործողութեան այն տեսարանում, երբ մալլըի սիրտը կատկածի կայծ է ընկնում և ապա վրէժ-խնդրութեան կրակ,— ուժգին տպաւորութիւն թողնելով, բուռն ծափահարութիւններ ստանալով: Ներկայացման ընդհանուր գրութիւնը թուլացրեց վերջին գործողութիւնը միայն, որի մէջ բոլոր խաղացողները մեծ սանձութիւն մտցրին իրանց սառն խաղով: Պետրոսեանի դերը և հազուադէպ էին: Համոզված ենք, որ կրկնվող այդ նշանաւոր խաղը, — դերակատարը կարող է աւելի մեծ աջողութիւն ունենալ, հնազնեւեալ աւելի ընտելանալով իր դերին:

Միւս նորութիւն այդ երեկոյն,— դա Եագո-Աբրահամեանն էր: Զարգելի դերասանը չը փչացրեց դերը, բայց նրան դեռ շատ աշխատանք է հարկաւոր թափել, մի ամբողջացրած Եագո դուրս բերելու համար: Եագոյի դերը մեծ դեր է, դրա համար հարկաւոր է և խորը ուսումնասիրութիւն և լաւ ձայն, և աշխոյժ միմիկա: Մեղ թվում է, որ առաջին անգամ այդ դերը կատարելով, պ. Աբրահամեան աւելի ուշք էր դարձնում իր ասելի խօսքերի վրա, քան իսպառի փորձաւորութիւնը: Գուցէ նրա խաղի պակասը լրացնի: Ի դէպ: Նորերս մենք առիթ ունեցանք տեսնելու ուսուցչ բեմի վրա Եագոյի դերում, հայ դերասան պ. Պետրոսեանին, — բենէֆիցիանտի եղբորը, — որ խաղում է Գրօմով աղգանտում: Եւ Եագոյի դերը բաւական լաւ է խաղում, և հետաքրքրական կը լինէր տեսնել հայոց բեմի վրա երկու եղբայր Պետրոսեաններին, միւր Օտեկ, միւր Եագոյի դերում:

Միւս դերակատարները, աւելի թոյլ էին, քան աշողալ:

Պ. Պետրոսեանին, որը, մի և նոյն ժամանակ, այս տարվայ հայոց թատրոնի նախաձեռնողն է, հասարակութիւնը լաւ պատեց.— լի թատրոն, բուռն ծափահարութիւններ, բաղմամբ թանգաղին ընծաներ, ցոյցեր թատրոնի դրանք: Արժանաւոր վարձատրութիւն արժանաւոր մշակին:

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԸ

Յունվարի 10-ին Կովկասեան դիմաւորական դատարանում ընկնում էր շտաբ-կապիտան Տիգրանուկէնի գործը, որը մեղադրվում էր երևանի քաղաքագլուխ Գեղամովին նախամտածած կերպով թեթև վէրք հասցնելու համար: Մեղադրվող պաշտպանն էր երդուեալ հաւատարմատար Տէր-Ստեփանով: Պրօկուրօրի կողմից դատարան կանչված վկաներից, որոնց թւում և Գեղամով, ոչ ոք չէր եկել, իսկ մեղադրվածի կողմից ներկայ էին երեք վկաներ:

Մեղադրական ակտի բովանդաղութիւնը հետեւին է. անցեալ 1891 թվի սեպտեմբերի 30-ին, երևանի քաղաքագլուխ Գեղամով, թուղթ կարդալով զնում էր կառքով քաղաքում այցելութիւններ գործելու համար, այն ժամանակ, երբ կառքն անցնում էր միջնաբերդի մօտով, նրա կառքը թռաւ մեղադրվող Տիգրանուկէն, և բռնեցրով խլիւղ Գեղամովի երեսին, իր սրի կողով վրաւորեց նրա գլուխը, որից Գեղամով, արիւնավաթալ թախ ընկաւ գետին: Գրանից յետոյ Տիգրանու-

զէն հեռացաւ, իսկ Գեղամով գնաց իշխանութիւններէ մօտ և յայտնեց նրանց թէ Տիգրանգառուզէն իր վրա յարձակում գործեց նախամտածած դիտարկութեամբ և ոչ թէ վերաւորանք հասցնելու նպատակով: այլ պիտաւորութիւն ունէր սպանել իրան, երբ ինքն քաղաքագլխի պարտաւորութիւններն էր կատարում, որովհետեւ ինքն այցելութիւններ էր անում որպէս քաղաքի ներկայացուցիչ՝ վերամուտի և շքանշաններով:

Այդ անցքի պատճառները առիթով Գեղամով չը կարողացաւ ճշդութեամբ բացատրութիւններ տալ, այնպէս որ ինքն պ. Տիգրանգառուզէնի հետ ծանօթ էր, բայց վերջը ծանօթութիւնն ընդհատեց, և որ իր և մեղադրողի յարաբերութիւնները մէջ խառն է մի կին, որի հետ ինքն՝ Գեղամով, ամենին ծանօթութիւնը կտրեց Տիգրանգառուզէնի նրան զարուգ դեռ շատ առաջ և վերջապէս, այս դէպքում Տիգրանգառուզէն իրանից՝ Գեղամովից, դժգոհ հայկական կուսակցութեան մի գործիչ էր:

Այդ անցքի վկաններն էին կառապանք և երկու թուրքեր, որոնք օգնութեան էին հասել Գեղամովին, և նրանք ընդհանուր գծերով ցոյց տուին, որ Տիգրանգառուզէն բռնադատութիւնը հարուածներ էր հասցնում Գեղամովի դէմը և սրի կոթով մի հարուած հասցրեց նրա գլխին:

Մեղադրող Տիգրանգառուզէն, հերքելով իր մեղաւորութիւնը վերջ հասցնելու, խոստովանեց, որ ինքն բռնադատ մի քանի հարուածներ հասցրեց Գեղամովի երեսին և դիւին, սակայն չը կամեցաւ բացատրել իր վարուելիքը պատճառները, զրակա նապէս հերքելով թէ ինքն հայկական ոչ մի կուսակցութեանը չէ պատկանում:

Ի նկատի առնելով բոլոր վերոյիշեալը, Տիգրանգառուզէն դատաստանի է ենթարկուում, մեղադրվելով այն բանում, որ նա նախամտածած դիտարկութեամբ թեթև վերջ հասցրեց Գեղամովի դիւին, այդ յանցանքը պատժուում է քրէական օրէնսդրութեան 1482 յօդուածով:

Մեղադրական ակտը կարգաւորեց յետոյ, Տիգրանգառուզէն առաջարկած հարցին թէ մեղաւոր է ճանաչուում իրան թէ ոչ, նա պատասխանեց. «Գեղամովին վերջ հասցնելու համար ես ինձ մեղաւոր չեմ համարում, բայց խոստովանում եմ, որ պատահմամբ հանդիպելով Գեղամովին, ես թուայ նրա կտուր և մի քանի հարուածներ հասցրի նրա դէմը: Գեղամով դեռ դրանից շատ առաջ վերաւորել էր ինձ. թէ ինչ էր այդ վերաւորանքը, ես չեմ ասի, բայց Գեղամով խուսափում էր ինձանից և ես նախաւորութիւն չունէի մինչև անգամ բացատրութիւններ պահանջել նրանից: Նրա ես թուայ կտուր, Գեղամով տեսնելով ինձ, ասեց. «Ինչ էք անում»:— (Սկսում եմ այն, ինչ որ սովորաբար անում են անարգիւններ հետ), որից յետոյ իմ վեցի բռնադատել նրա դէմը: Ես ասեցի հարուածներ հասցրի գլխին. Գեղամով դուրս պրծաւ ձեռքերից և կտուրից ընկաւ, և այդ ժամանակ գլուխը վերաւորեց՝ դիպցնելով կտուրի թեւին կամ մի ուրիշ բանին:

Հարցութիւններ ենթարկված վկաններից էական է գնդապետ Վե-Ղադարիի ցուցմունքը. «Ես, ասեց վկան, ականատես չեի Գեղամովի կրած վերաւորանքին, բայց ժամադրում ուրիշներից լսածը ինձ զեկուցեց, թէ մի ինչ որ օֆիցեր ծեծեց քաղաքագլուխ Գեղամովին: Նրա ես եկայ նրա մօտ, կապում էին նրա վերջը, և իմ հարցմունքին Գեղամով պատասխանեց, որ ինքն չէ յիշում թէ ինչ պաշտպանվում էր վրայում: Ապա Գեղամով աւանգ, «մէկ բան կարող եմ ասել. ես չեմ կարող սրանից յետոյ ասել. հէնց որ կառուցանամ, կամ ես կը լինեմ գլխի կամ Տիգրանգառուզէն:» Գեղամով լաւ համբաւ չունի:»

Կարողացվեցան սկզբնական ճիշտութեան ժամանակ տուած ցուցմունքները: Նրանց բովանդակութիւնը մտքած է մեղադրական ակտում: Գեղամովի ցուցմունքը մէջ գործի համար կական տեղը հետեւեալն է:

«Կամենայով բացատրել Տիգրանգառուզէնի վարմունքի պատճառները,—ասում է Գեղամով,— ես դժուարանում եմ մի որոշ կարծիք յայտնել և այս դէպքում կարող եմ միայն ենթադրութիւն անել: Նրանում կայ մի կուսակցութիւն, որը վաղուց հալածուած է ինձ իր անձնական շահերի համար, այդ կուսակցութիւնը ինձ համարում է հայոց եկեղեցու և ազգի մասնիչ այն պատճառով, որ շատ դէպքերում գործում էի հակառակ այդ կուսակցութեան ուղղութեան,

յիշելով, թէ հայ ժողովրդի շահը պահանջում է, որպէս զի հայերը ձեռք ձեռքի տուած գնան ուսն կառավարութեան հետ, որի շնորհները հայ ազգը առատութեամբ վայելում է. իսկ կուսակցութիւնը ընտրել է հէնց Տիգրանգառուզէնի երեխայն պատճառով, որ իմ և Տիգրանգառուզէնի յարաբերութիւնները մէջ խառն է մի կին:»

Պրօկուրօրի օգնականը մեղադրանքը ապացուցված համարելով, առաջարկում էր բանտարկութեան դատաւարութիւն Տիգրանգառուզէնին: իսկ պաշտպանը ապացուցում էր, թէ վերջ հասցնելը չէ ապացուցված և որ մեղադրողը կարող է մեղաւոր համարվել միայն վերաւորանք հասցնելու համար, և որովհետեւ այդ բանի մասին գտնադատ չը կայ Գեղամովի կողմից, այդ պատճառով Տիգրանգառուզէնին պէտք է արգելադրել:

Գատարանը, ինչպէս հաղորդում է «Тифлис-Томск» լրագիրը, համաձայնվելով պաշտպանի հետ, արգելադրեց Տիգրանգառուզէնին:

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՈՐԻՆ

Գանձակ, դեկտեմբերի 12-ին
Պատուական «Մշակի» 138 համարի մէջ Գանձակից մի լուր կար տպված, որը վերաբերում է իմ անձնաւորութեան, և ընթերցող հասարակութեան առջև ինձ ներկայացնում է, որպէս մի անբարոյական մարդ, որը յայտնի է և թեմական կոնսիստորիային: Արդարադատութիւնը պահանջում է, որ ես պաշտպանեմ իմ վերաբերված պատուը ձեր պարզի մէջ, և յոստով եմ, որ ձեր թերթի մօտակայ համարներում չնորհանք իմ այս պատասխանը տպելու:

«Յամենայնի որոց կրէ, և ի նոյն զայլ կարծէ», ասում է սրբազան հեղինակի մէջը. եթէ իմ պատուը վերաւորող լրատուն ճշմարտաւէր ունի և ոչ իմ ուշտեալ թշնամին, թող քաջութիւն ունենայ իր իսկական անունով պարտաւար լինել և ոչ թէ անյայտութեան դարանից մարդու քարկոծել: Նրան ինչ չա՞ն թէ հոգեւոր կառավարութեան մէջ ով է քաղաքագլուխ լինելու կամ չէ լինելու, բայց հանգամանքից երևում է, թէ նրա ինտերեսը պահանջում է, որ ես չը լինեմ, որպէս զի չը վտանգվեն նրա երեսի և աներոյթ գործերը: Եթէ «Տարաղ» շաբաթաթերթի № 45-ի լրատունը իր կարծիքն է յայտնել ինձ համար քաղաքագլուխ լինելու (զուգէ հէնց դիտմամբ է այնպէս գրել, որ զրգոք է իմ հին թշնամիքս) դա չէ նշանակում թէ ես ձգտում եմ քաղաքագլուխ պատճառ ստանալու, որ չար նախանձով կուրացած լրատուն չէ էլ տեսնում, թէ ով է այդ պաշտօնին հետաւում կամ ով է ստացողը:

Հրապարակվով յայտնում եմ, որ ես քաղաքագլուխ լինելու ցանկութեան չունեմ, նրա համար որ, ուժեղից շատ քիչ է և աշխատութիւնը շատ քիչ մի նախանձով պաշտօն է քաղաքագլուխ լինելը, որ պրօտեկցիայի չնորոյթ ստանաւ ամսական 25 ռուբլի ուժեղի:

Համաձայն եմ ձեր պ. լրատուն այն կարծիքին հետ, թէ «մեր աչքերը սովորել են տեսնել այսօրվայ մանրամասնաւ և կոշկակարը վաղը քահանայական պաշտօնում»: Ապա եթէ կոշկակար քահանան գերեզման մտաւ, մի՞թէ նրա լքեալ որդին իրաւունք չունի իր հօր փոխարինել. չէ որ քրիստոնէական օրէնքով այսպէս է սահմանված, «փոխանակ հարց, եղբայր որդի չեցաւ» և այժմ էլ այդպէս չէ: Պ. լրատուն եթէ քաղաքագլուխը մարդ է ինչպէս համար է իմ մասնաւոր կեանքով հետաքրքրվում, թէ ես առաջ մանրամասնաւ էի, խանութի հաւաքել եմ և անգործ եմ: Եթէ ես անգործ լինեմ, իմ ցուքս թողած ուրիշ վրա կը մտածեմ. ամեն մարդ իր օգուտը լաւ գիտէ: Կնիւզ իմանալ նպատակս. ես խանութի հաւաքել եմ նրա համար, որ աւելի օգուտէն գործ ունեմ: Ես քահանայ դառնալու գործ չունեմ կոնսիստորիայում, ինչպէս սրբաւորում է լրատուն, ես ունեմ հարկից ազատութեան համար առաջարկած թղթեր: Հոգեւորականութեան այդ օրէնքը գիտեմ, որ առանց ծուխի քահանայ չեմ ձեռնադրում, ուրեմն ես այսպիսի առաջարկութիւն չեմ անել: Ես դեռ թեմական իշխանութեանը յայտնի անձնաւորութիւն լինելու պատիւը չունեմ, ինչպէս անհարկում է իմ լրատուն: Ես երեսփոխ չեմ եղած, չեմ առած, չեմ տուած, որ իմ խաբար գործերով ճանաչել կոնսիստորիան, որ նրա արդարադատութիւնից դեռ մնալու համար պատասխարկեմ պրօտեկցիայի հովանաւորութեան տակ: Ուրեմն ով որ այս տե-

սակ գործեր ունենայ և ինքն էլ հոգեւորական անձն լինի, յատկապէս նրան լաւ կը ճանաչէ իր իշխանութիւնը: Ի վերջոյ, պ. լրատուն ինձ անընդունակ է համարում, այնպէս որ դեռ չը գիտէ իմ այն համեստ արհեստը, որը կերակրում է մի քանի ընտանիք, միայն վճառում է, որ քաղաքագլուխ պիտի լինեմ և ապա քահանայ. պարունի երեսկալութիւնը իրան ցնորքի մէջ է գցում: Եթէ նա ենթադրում է արանից 15 տարի առաջ քաղաքագլուխ, որ նրա շնորհը չունենալով, նրա բարոյական գործիւնը այն արարածներին չնորհից է, որի մէջ այժմ և փայլում է նա գեղեցիկ հուշակով:

Յ. Ա.

ՆՅԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ԷՋՄԻԱՆՆԻՑ հետեւալ նշանաւոր հեռագիրը, յունվարի 12-ից. «Վաղը ճանապարհ է ընկնում դէպի Թիֆլիս ընդէ մասնաժողով Արեւանեանց եպիսկոպոսի նախագահութեամբ, յունվարի 6-ին Թիֆլիսում պատահած ժողովրդական աղետի գործը ընկելու համար»:

Յունվարի 6-ին Կուր գետում խեղդվածների աղքատ ընտանիքների օգտին հետեւալ անձինք ուղարկել են մեզ հետեւալ գումարները. Ալեքսանդր Մէլիք-Աղաբեանց 50 ռուբլի, տ. Սօֆիա Գեօզալեան 1 ռ., Կարապետ Սերովբեանց (ոսկւրի) 10 ռ., Պողոս Տէր-Յովհաննիսեանց 3 ռ., Միռն 5 ռ., Թադէոս Կլեբեղեան 5 ռ., Թուրքի Վլասեանց 3 ռ., քահանայ տէր-Յովսէփ Տէր-Բարսեղեանց 3 ռ., խառնակ Մէլիք-Աղաբեանց 5 ռ., տ. Եղիսարէթ Խէչիկեանց 2 ռ., Բարսեղ Աբովեանց 2 ռ., Եւդոր Զօհրաբեանց 10 ռ., Մինաս Սուրխանեանց 5 ռ., և Բագդուկ Եօթ անձինք (Նաւրիսիան, Զաքարեան, Համբարձումեանց, Տէր-Գրիգորեանց, Յովհաննիսեան, Մամիկոնեան, Բաբայանեան) 13 ռուբլի, ընդամենը 117 ռուբլի, իսկ նախկին 225 ռուբլու հետ ունենք 342 ռուբլի:

«Մշակի» շաբաթ օրվայ, 4-րդ համարը մի քանի ժամվայ ընթացքում ծախվեց Թիֆլիսի փողոցներում աւելի քան 200 օրինակ:

Վարչապետը քնակվող պ. Մ. Զօհրաբեանց, ինքն գրվելով «Մշակի» երկու օրինակին (մին վարչապետ, իսկ մյուսը Վիլնոյ), մի և նոյն ժամանակ ուղարկել է մեզ 30 ռուբլի, խնդրելով որ այդ փողով ուղարկենք «Մշակի» տարեկան երեք օրինակ ում որ յարմար կը համարենք: Մենք կուղարկենք մեր լրագիրը ամբողջ 1892 տարվայ ընթացքում պ. Զօհրաբեանի անունից հետեւալ հասցէներով. 1) Երևանի հայ զինուորային, 2) Գարվախարայ գիւղի հայոց ուսումնարանին և 3) Ֆրանսիայի Գրինիւն քաղաքի երկրագործական բարձրագոյն դպրոցի հայ ուսանողներին:

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը, յունվարի 11-ի շաբաթ օրվայ իր նիստում վճռել է՝ նուրիշ յօդուտ յունվարի 6-ի աղետից վնասվածների 1,000 ռուբլի:

Կովկասեան պ. կառավարչապետը յօդուտ յունվարի 6-ի վնասվածների նուրիշ է 1,000 ռուբլի իր ձեռքի տակ եղած արտակարգ գումարից:

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ մինչև այժմ՝ յօդուտ յունվարի 6-ի վնասվածների հանգանակած գումարը 1,000 ռուբլուց անցել է:

Հայունեաց Բարեգործական ընկերութիւնը վրձնել է իր լինելի պարահանգեսի եկամտից 100/0 նուրիշ յօդուտ յունվարի 6-ի վնասվածների:

Վրաց «Հրատարակչական ընկերութիւնը» տը պարկել է փողերի բրօշիւրով յունվարի 6-ի աղետի նկարագրութիւնը և վճառում է յօդուտ աղետից վնասվածների:

Այս օրերս վախճանված Յ. Արեւայումեան թանգրի է մի կտակ, որով համարեա իր ամբողջ կառուցութիւնը նուրիշում է կրթութեան գործին. հանգուցեալ անունով պէտք է սովորեն 14 որդեգիրներ զանազան դպրոցներում, մեծ մասը հայերից, մնացածը վրացիներից և ռուսներից: Հանգուցեալ Արեւայումեան իր կտակում յայտնել

է, որ այդ նպատակի համար իր ամբողջ հարստութիւնը (թէ կանխիկ դրամը և թէ անշարժ կայքերը) դարձնեն անձնական իր զուտար և տուկոսը գործ զնեն վերայիշեալ գործի համար:

Այս տարի լրանում է վեցերորդի «Բագմավէպ» հանդիսի գոյութեան 50-ամեակը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻՍՏԻՑ

Հօհենհէյմ, 9-ին յունվարի
Անկարող լինելով դանազան կողմերից մեզ դիմող անձանց առանձին առանձին տեղեկութիւններ հաղորդել Հօհենհէյմի դիւղատնտեսական ճեմարանի մասին, խնդրում եմ, մեծարելի խնամքից, պատուական «Մշակի» մօտակայ համարներից մէկում տեղ չնորհել այս նամակիս, որով յոստով եմ որ մասամբ բաւականացրած կը լինեմ ոչ միայն ինձ դիմողներին, այլ նաև նրանց, որոնք մտադրութիւն ունեն երբ և իցէ արտասահմանեան բարձրագոյն դպրոցներից մէկում ուսումնասիրել մեր երկրի համար անհրաժեշտ և ամենաօգտակար մասնագիտութիւններից մէկը—գիւղատնտեսութիւն:

Հօհենհէյմի գիւղատնտեսական ճեմարանը գտնվում է Գերմանիայի Վիրտեմբերգեան թագաւորութեան մայրաքաղաքից՝ Շտուտգարտից մօտաւորապէս 5 վերստ հեռավորութեան վրա: Նա միացած է Շտուտգարտի հետ ատամնաւոր-երկաթուղով, որը օրական 10 անգամ մայրաքաղաքից Հօհենհէյմ է գալիս և դառնում:

Հօհենհէյմի իր գեղեցիկ տեղագրութեան, մաքուր օդի և բանաստեղծական բնութեան շնորհով գրեական դէպի ինքը անցեալ տարվայ վերջերում Վիրտեմբերգի հերցօգ Կարլոսի, անմահ Միլլերի մեկնեստի, ուշադրութիւնը, որը այստեղ չինել տուցե ֆրանսիական ընդեստին ոճով իր համար մէկ գեղեցիկ ամրոց, ուր և անց էր կացնում նա տարվայ մեծագոյն մասը: Կարլոսի յաջորդ Վիլհելմ I Նապօլէօն մեծից Վիրտեմբերգի արքայական գահը ստանալով, թողնում է Հօհենհէյմ և տեղափոխվում է Շտուտգարտ, որից յետոյ հերցօգի Հօհենհէյմի ամրոցը փոխվում է 1812 թվին գիւղատնտեսական և անտառային ճեմարանի:

Վերջինս 1875 թվին փակվում է, իսկ գիւղատնտեսական ճեմարանը շարունակում է իր ընթացքը: Այսպէս ուրեմն ահա 73 տարի է ինչ գոյութիւն ունի ճեմարանը և նա իր 73-ամեայ գոյութեան ընթացքում այնպիսի մի մեծ դարկ է տուել Վիրտեմբերգի գիւղատնտեսական գործի զարգացմանը, որպիսին դժուար թէ տուած լինի մի ուրիշ նոյնանման բարձրագոյն դպրոց, որի շնորհով նա ոչ միայն Գերմանիայում մեծ հռչակ ունի, այլ նաև նրա սահմաններից շատ հեռու Հօհենհէյմի ճեմարանն այժմ ներկայացնում է մի այնպիսի խառնուրդ աղբիւրի ներկայացուցիչներ, որ մարդ ակամայ հարցնում է իրան՝ չը լինի թէ սա աղբիւրի ցուցահանգէս է. և ուղիղ որ ինչ աղբիւր, ի՞նչ ժողովրդից ասես այստեղ չը կայ. էլ չեմ ասում, որ Եւրօպայի բոլոր պետութիւնները և աղբիւրն ունեն այստեղ իրանց բաղաժախ ներկայացուցիչներ, ամենիկացուցիչներ, չինացու, մուկայացու, եսպոնացու, բրազիլացու և ասիկներկայացուցիչներին ամենայն տարեկարել է տեսնել Հօհենհէյմի ճեմարանում: A propos. չէ կարելի չը դարմանալ և չուրախանալ մի երևոյթի վրա: Ասիական աղբիւրի որդիք, մասնաւոր եսպոնացի ուսանողները այնպիսի արտակարգ ընդունակութիւններ են ցոյց տուել և տալիս, որ այժմ գերմանացի ուսանողները մէկ տեսակ դժգոհութեամբ են նայում Հօհենհէյմի եկող օտարերկրացի երեւտասարներին վրա: Եւ այդ դժգոհութիւնն ունի իր հիմքը: Ահա 4 տարի է ինչ միմեանց ետեւից եսպոնացի ուսանողները ստանում են, իրանց վերջնական դիպլոմի համար դրած շարադրութեան համար, առաջին մրցանակը: Այս տարի ևս նոյնը պատահեց: Նոյնմեքերն ճեմարանը մեծ հանդիսով տօնեց իր 73-ամեայ տարեդարձը. Շտուտգարտից եկած պատուաւոր հիւրերից բացի ներկայ էր լուսաւորութեան միւնիստրը իր օգնականներով: Բոլոր ուսանողները՝ ճեմարանի դահլիճում պատուաւոր տեղ էին ըռնել, տարեկան հաշիւը կարգաւորեց յետոյ, գալով ուսումնական մասին, լուսաւորութեան միւնիստրը յայտնեց, որ առաջին մրցանակին արժանացել է մի երեւտասար, որի անունը եթէ իմանան գերմանացի

